

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան

պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

« 23 » մայիսի 2014թ. նիստում

Խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Կուրսային աշխատանքը կրթական ծրագրի կարևոր բաղադրիչներից է, որի կատարումը ուսանողից պահանջում է գիտելիքների որոշակի պաշար և նպաստում է նրա մասնագիտական հմտությունների ձևավորմանը:
- 1.2 Կուրսային աշխատանքի կատարումը ուսանողից համառ ու պլանաչափ աշխատանք պահանջող գործընթաց է, որը նախատեսում է ուսանողի տեսական ու գործնական գիտելիքների ամրապնդում և ընդլայնում, ինչպես նաև մասնագիտական գործունեության ընթացքում որոշակի խնդիրներն ինքնուրույն լուծելու հմտություն:

- 1.3 Կուրսային աշխատանքների թեմատիկան մշակվում է համապատասխան մասնագիտական ամբիոններում և ներկայացվում ուսանողներին՝ ծանոթացման: Տարբեր մասնագիտական առարկաների գծով կուրսային աշխատանքների համատեղ թեմատիկայի մշակումը նպաստում է միջառարկայական կապերի հաստատմանը և կոնկրետ խնդիրների լուծման նկատմամբ համակարգված մոտեցման ներդրմանը:
- 1.4 Կուրսային աշխատանքների քանակը և առարկաների ցանկը որոշվում են տվյալ մասնագիտության ուսումնական պլանով. նախատեսվում է 2-3 կուրսային աշխատանք հատուկ մասնագիտական դասընթացներից:

2. ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

- 2.1 Կուրսային աշխատանքների թեմատիկան պետք է համապատասխանի տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջներին, գիտության տվյալ ճյուղի զարգացման արդիական մակարդակին և վերաբերի բուհական մասնագիտական դասընթացին:
- 2.2 Կուրսային աշխատանքների թեմաները պիտի վերնագրվեն պարզ և հակիրճ:
- 2.3 . Կուրսային աշխատանքների թեմաների մասին ուսանողներին տեղեկացվում է տվյալ կիսամյակի սկզբում: Ինստիտուտի համապատասխան ամբիոնը ուսանողներին է ներկայացնում կուրսային աշխատանքների թեմաների ցանկը՝ ըստ ղեկավարող դասախոսների: Տասնօրյա ժամկետում համապատասխան ամբիոնում վերջնականապես ընտրվում, հաստատվում են կուրսային աշխատանքների կոնկրետ թեմաները՝ ըստ կատարող ուսանողների ու ղեկավարների, և վավերացվում են ֆակուլտետի խորհրդի որոշմամբ կիսամյակի երկրորդ տասնօրյակում:

2.4 Կուրսային աշխատանքի թեմայի փոփոխությունն ամբիոնի նիստով թույլատրվում է բացառիկ դեպքերում՝ ուսանողի բացատրագրի և ղեկավարի համաձայնության հիման վրա:

3. ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՍՏՈՒԳՄԱՆ, ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3.1 Կուրսային աշխատանքի կատարման վերահսկողությունն իրականացնում է աշխատանքի ղեկավարը՝ ըստ ամբիոնի կողմից մշակված ժամանակացույցի:

3.2 Կուրսային աշխատանքի կատարման ժամանակահատվածի համար ուսանողի հետ ղեկավարը մշակում է անհատական պլան՝ կատարման փուլերի և ժամկետների նշումով, և մեկ շաբաթ ժամկետում ներկայացվում է ամբիոն:

3.3 Աշխատանքի կատարման ընթացքում ուսանողը ղեկավարին ըստ անհատական պլանի ժամկետների, ներկայացնում է գրավոր հաշվետվություն՝ աշխատանքի առանձին փուլերի կատարման և ստացած արդյունքների վերաբերյալ:

3.4 Կուրսային աշխատանքը ուսանողը կամ դասախոսը հանձնում է ամբիոն՝ կուրսային աշխատանքի ներկայացումից ոչ ուշ, քան 2 շաբաթ առաջ:

3.5 Ղեկավարը ստորագրման ժամանակ պետք է հաշվի առնի՝

- աշխատանքի բովանդակության համապատասխանությունը ուսանողի ընտրած թեմային,
- տվյալ թեմային վերաբերող տեսական և գործնական նյութերի օգտագործման ու մշակման մակարդակը,
- ուսանողի՝ գիտական մեթոդների և տերմինաբանության իմացության մակարդակը,
- կուրսային աշխատանքի պլանով նախանշված խնդիրների լուծման խորությունը, կատարած աշխատանքի առավելությունները և թերությունները,

- եզրակացությունների հիմնավորված և փաստարկված լինելը,
- աշխատանքի ձևակերպման պահանջների պահպանումը:

3.6 Ներկայացման համար տրվում է մինչև 15 թույլ ժամանակ:

Ուսանողի ելույթը պետք է պարունակի որոշակի արտահայտված տեղեկություններ աշխատանքի թեմայի, ստացած արդյունքերի և եզրակացությունների մասին:

3.7 Կուրսային աշխատանքը գնահատվում է 100-միավորանոց սանդղակով՝ համաձայն աղյուսակ 1-ում ներկայացված չափանիշների:

Աղյուսակ 1. Կուրսային աշխատանքի բաղադրիչները և հատկացվող միավորները (ըստ 100-միավորանոց սանդղակի)

	Գնահատման բաղադրիչները	Հատկացվող միավորները
1	Կուրսային աշխատանքի ձևակերպում (0-30)	
1.1	Աշխատանքի թեմային վերաբերող տեսական և գործնական նյութերի օգտագործման և մշակման մակարդակը	0-10
1.2	Ուսանողի կողմից գրականության և այլ փաստական նյութերի կիրառությունը	0-10
1.3	Կուրսային աշխատանքի ձևակերպման համապատասխանությունը սույն կանոնակարգի VII բաժնում նշված չափանիշներին	0-10
2	Պաշտպանություն (0-70)	
2.1	Ղեկավարի կարծիքը	0-10
2.2	Աշխատանքի բովանդակության ներկայացման՝ ուսանողի կարողությունը	0-20
2.3	Ուսանողի կողմից սեփական տեսակետը պաշտպանելու կարողությունը	0-10
2.4	Ուսանողի կողմից աշխատանքը ներկայացնելու հմտությունը և միջոցների կիրառությունը (գրաֆիկներ, ցուցադրական միջոցներ, սլայդներ և այլն)	0-10
2.5	Ուսանողի խոսքի մշակույթը	0-20

3.8 Վերջնական գնահատականը գրանցվում է քննական տեղեկագրում, ուսանողի ստուգարքային գրքույկում, ինչպես նաև կուրսային աշխատանքի տիտղոսաթերթի վրա և հավաստվում է ղեկավարի ստորագրությամբ:

3.9 Կուրսային աշխատանքի թեման և գնահատականը գրանցվում են դիպլոմի հավելվածում:

3.10 Պաշտպանության չթույլատրված կամ բացասական գնահատված կուրսային աշխատանքը համարվում է ակադեմիական պարտք:

4. ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

4.1 Կուրսային աշխատանքի ղեկավար կարող են լինել թողարկող ամբիոնի այն փորձառու դասախոսները, որոնք ունեն ոչ պակաս, քան 3 տարվա գիտամանկավարժական (գիտահետազոտական) աշխատանքի փորձ տվյալ առարկայի դասավանդման ուղղությամբ:

4.2 Ղեկավարի գործառույթներն են՝

- գործնական օգնության ցուցաբերում ուսանողներին կուրսային աշխատանքի թեմայի ընտրության և պլանի մշակման գործում,
- աշխատանքի նպատակի, խնդիրների, հետազոտության առարկայի գրագետ և հստակ ձևակերպում,
- աջակցություն հետազոտության մեթոդիկայի գործում,
- օգնություն գրականության և մեթոդական նյութերի ընտրության գործում,
- պարբերական վերահսկողություն կուրսային աշխատանքի կատարման ընթացքին,
- կուրսային աշխատանքի գնահատում՝ համաձայն ներկայացվող պահանջների,
- ամբիոնին իրազեկում աշխատանքի կատարման մասին:

5. ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՈՒՄ

5.1 Կուրսային աշխատանքը կատարելիս ուսանողը պարտավոր է՝

- պահպանել ամբիոնի կողմից այդ աշխատանքի կատարման ժամանակացույցը,
- կատարել ղեկավարի առաջադրանքները, հաշվետու լինել նրան աշխատանքի ընթացքի մասին,
- ցուցաբերել ինքնուրույնություն թեմային վերաբերող գրականության ընտրության և վերլուծության հարցում, ինչպես նաև ստացված արդյունքները մեկնաբանելիս:

5.2 Կուրսային աշխատանքի կատարման ընթացքը բաղկացած է հետևյալ փոխկապակցված փուլերից՝

- գիտական ղեկավարի նշանակում,
- կուրսային աշխատանքի թեմայի ընտրություն և հաստատում,
- աշխատանքային պլանի հաստատում,
- գրականության որոնում կուրսային աշխատանքի թեմայով,
- տեսական նյութերի վերլուծություն և ամփոփում, գրականության վերլուծության սևագիր տարբերակի ներկայացում ղեկավարին,
- փորձարարական աշխատանքների կատարում,
- հիմնական եզրակացությունների ձևակերպում,
- կուրսային աշխատանքի նախնական տարբերակի ներկայացում ղեկավարին,
- աշխատանքի ղեկավարի կողմից նշված թերությունների ուղղում,
- կուրսային աշխատանքի վերջնական տարբերակի կազմում և հանձնում ամբիոն,
- կուրսային աշխատանքի ներկայացում:

6. ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

6.1 Կուրսային աշխատանքի ձևավորումը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

6.1.1 այն ներկայացվում է տպագիր՝ 15-20 էջի սահմաններում, A4 չափի սպիտակ թղթի մի էջի վրա: Էջի լուսանցքներն են. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ, 1,5 միջակայքով, 12 տառաչափով, Arial Armenian

(հայերեն), Arial LatRus (ռուսերեն) և Times New Roman (այլ օտար լեզուներով) տառատեսակներով:

6.2 Կուրսային աշխատանքը պետք է ունենա կազմ, տիտղոսաթերթ (հավելված 1), բովանդակություն (հավելված 2), ներածություն, հիմնական մաս (գլուխ, բաժին, ենթաբաժին), ամփոփում, գրականության ցանկ, անհրաժեշտության դեպքում նաև հավելվածներ:

6.3 Տիտղոսաթերթը (հավելված 1) պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

- բուհի, ֆակուլտետի, ամբիոնի, մասնագիտության անվանումները,
- կուրսային աշխատանքի թեմայի անվանումը,
- ուսանողի անունը, ազգանունը և ստորագրությունը,
- կուրսային աշխատանքի ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը և պաշտոնը,
- ներկայացման ամսաթիվը, գնահատականը (թվերով և տառերով), ղեկավարի ստորագրությունը,
- քաղաքը, աշխատանքի կատարման տարին:

6.4 Կուրսային աշխատանքի բովանդակությունում (ցանկում) նշվում են նրա կառուցվածքային բաղադրիչները՝ ներածություն, հիմնական մաս (բաժիններ և ենթաբաժիններ, եզրակացություն, գրականության ցանկ, հավելվածներ)՝ ըստ էջերի:

6.4.1 Ներածությունը պետք է պարունակի՝

- աշխատանքի նպատակի և խնդիրների ձևակերպումը,
- հետազոտության մեթոդների և առարկայի նկարագրությունը,
- տեղեկություններ աշխատանքի կառուցվածքի մասին:

6.4.2 Աշխատանքի հիմնական մասը, որպես կանոն, բաժանվում է 2 գլուխների՝ տեսական և փորձարարական, որոնք պետք է ավարտվեն հեղինակի եզրակացություններով:

6.4.3 Տեսական հետազոտությունները պարունակում են գրականության տվյալներ՝ պատմական ակնարկով, տպագրված աշխատանքների վերլուծությամբ, հիմնահարցի առկա վիճակով:

- 6.5 Փորձարարական մասում շարադրվում են աշխատանքի կատարման ընթացքում օգտագործված մեթոդները, ներկայացվում աշխատանքի արդյունքները:
- 6.6 Աշխատանքի ամփոփումը պետք է պարունակի ուսումնասիրության հիման վրա կատարված եզրակացությունները:
- 6.7 Օգտագործված գրականության ցանկը պետք է համապատասխանի հավելված 4-ում բերված օրինակին:
- 6.8 Էջադրումը սկսվում է 3-րդ էջից (էջը նշվում է թղթի ներքևում՝ կենտրոնում): Տիտղոսաթերթը և բովանդակությունը (ցանկ) չեն էջակալվում:
- 6.9 Օգտագործված աղբյուրների հղումները նշվում են նախադասությունների վերջում՝ քառակուսի փակագծերում՝ արաբական թվանշաններով նշելով տվյալ աղբյուրը գրականության ցանկում: Օրինակ՝ [2, էջ 105]:
- 6.10 Աղյուսակները, նկարները հաջորդաբար համարակալվում են և կարող են տեղադրվել ինչպես անմիջականորեն տեքստում, այնպես էլ հավելվածներում:
- 6.11 Կուրսային աշխատանքի յուրաքանչյուր բաժինը սկսվում է նոր էջից: Վերնագիրը գրվում է մեծատառերով՝ մուգ տառատեսակով:

7. ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

- 7.1 Կուրսային աշխատանքի ներկայացման թույլատրվում են այն ուսանողները, որոնք հաստատված ժամանակացույցով թողարկող ամբիոն են ներկայացրել սույն կանոնակարգի պահանջներին համապատասխանող աշխատանք՝ ղեկավարի դրական կարծիքով:
- 7.2 Հարգելի պատճառներով (հիվանդություն կամ այլ) կուրսային աշխատանքի պաշտպանության չներկայացած ուսանողին համապատասխան ամբիոնի որոշմամբ նշանակվում է աշխատանքի ներկայացում լուծարքային շրջանում:
- 7.3 Կուրսային աշխատանքի գնահատականը հայտարարվում է անմիջապես ներկայացումից հետո՝ մինչև տեղեկագիրը լրացնելը: Գնահատականի բողոքարկումը ուսանողի կողմից կատարվում է նույն պահին և արձանագրվում է առանձին:

- 7.4 Նշանակված ժամկետներում ուսանողի կողմից կուրսային աշխատանքը չներկայացնելը կամ անհարգելի պատճառով աշխատանքի ներկայացմանը չմասնակցելը կամ «անբավարար» գնահատական ստանալը համարվում են ակադեմիական պարտք, որը վերահանձնելու համար ուսանողը պարտավոր է ըստ ընթացակարգի՝ ներկայացնել և պաշտպանել կուրսային աշխատանքը լուծարքային շրջանում:
- 7.5 Լուծարքային շրջանում անբավարար գնահատական ստանալու դեպքում ուսանողը կարող է որպես կրեդիտ-պարտք այն տեղափոխել մինչև ավարտական կուրսի առաջին կիսամյակ: Վերահանձնվող կուրսային աշխատանքի թեման կարող է նաև փոփոխվել :
- 7.6 Գնահատված կուրսային աշխատանքները պահվում են համապատասխան ամբիոններում 2 (երկու) տարի, որից հետո արխիվացվում են:

Հավելված 1. Կուրսային աշխատանքի տիտղոսաթերթ

ՀՀ Կրթության և գիտության նախարարություն

Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

ՊՈԱԿ

(Ֆակուլտետի անվանումը)

(մասնագիտության անվանումը)

(ամբիոնի անվանումը)

ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

առարկայից

թեմայով

Կատարող՝ Բակլավարի ___ կուրսի ուսանող

(ուսանողի անուն, ազգանուն)

(ստորագր.)

Ղեկավար՝ _____

(անուն, ազգանուն, հայրանուն, գիտական աստիճան, կոչում)

Նշում՝ ներկայացմանը թույլատրելու (չթույլատրելու) մասին _____

Գնահատում եմ _____ միավոր

/թվով, տասերով/

« _____ » _____ 201.. թ.

(ղեկավարի ստորագրությունը)

Գյումրի 201.. թ.

Բովանդակություն

Էջ

Ներածություն.....	3
1. Գլուխ 1-ինի անվանումը.....	4
(բաժինների, ենթաբաժինների անվանումը).....	4
2. Գլուխ 2-րդի անվանումը.....	15
(բաժինների, ենթաբաժինների անվանումը).....	15
Ամփոփում.....	19
Գրականության ցանկ.....	20
Հավելվածներ.....	22

Օգտագործված գրականության ցանկ

Մենագրություններ

- Աղոնց Ն., Հայաստանի պատմություն,-Երկեր, հ. Դ, Եր., 2009:
- Адонц Н., Армения в эпоху Юстиниана, Изд-во Ереванского Университета, Ереван, 1971, 526 с.

Օրենսդրական նյութեր

- ՀՀ Սահմանադրություն, «Լույս» հրատ., Երևան, 2005, 25 էջ:

Հոդվածներ

- Խորիկյան Հ., Մարաստանի էթնիկական կազմի շուրջ՝ ըստ Ստրաբոնի.- Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2012, էջ 337-341:

Ինտերնետային պաշարներ

- Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր- www.parliament.am/law_docs/190711_HO246havelvats.pdf
- Sami Moubayed, Why Syria's Christians are angry?- <http://edition.cnn.com/2012/02/28/opinion/moubayed-syria-christians/index.html>